ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

8 օգոստոսի 2011թ. **N__-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» հ.656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ 2011 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Երևան քաղաքի հողային հաշվեկշռին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, Երևանի քաղաքապետը օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի վարչական տարածքում գտնվող հողերի ընթացիկ հաշվառումը և կազմում է Երևանի հողային հաշվեկշիռը։

ՀՀ հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)։ Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը կազմվում է հողերի պետական հաշվառման ընթացիկ տվյալների հիման վրա։

Հողային հաշվեկշռում արտացոլվում են հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ։ Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխությունները՝ հողի սեփականության ձևի, հողի օգտագործման ձևի, հողի նպատակային նշանակության, հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման, քանդման և այլ փոփոխությունները։

Երևան քաղաքի վարչական տարածքը 2010 թվականի համեմետ փոփոխություններ չի կրել և կազմում է ընդամենը 22328 հա։

ՀՀ կառավարության որոշումներով գյուղատնտեսական նշանակության հողերը պակասել են 146.8 հեկտարով և փոխադրվել բնակավայրերի կատեգորիա, և այժմ գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 3538.9 հա։

Երևան քաղաքի վարելահողերը չեն փոխվել և կազմում են ընդամենը 981.23 հա, բազմամյա տնկարկները փոփոխություններ չեն կրել և կազմում են ընդամենը 247.42 հա, արոտները փոփոխություններ չեն կրել և կազմում են ընդամենը 686.75 հա, այլ հողատեսքերը պակասել են 194.1 հեկտարով և անցել բնակայրերի հողերի տակ։

Բնակավայերի հողերը 2010 թ. համեմատ ավելացել են ընդամենը 232.2 հեկտարով, որից՝ ի հաշիվ 194.1 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի, 5.1 հա արդյունաբերության հողերի, 33.0 հա հատուկ պահպանվող՝ հանգստի և այժմ կազմում են ընդամենը 11815.4 հա։

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը պակասել են 5.1 հեկտարով և անցել բնակավայրերի հողերի շարքը և այժմ կազմում են ընդամենը 2939.7 հա։

Հատուկ պահպանվող հողերը 2010թ. տվյալների համեմատ պակասել են 33.0 հեկտարով, անցել բնակավայրերի կատեգորիա և այժմ կազմում են ընդամենը 1016.1։

Բնապահպանական և պատմամշակութային հողերը 2010թ. տվյալների համեմատ փոփոխություն չեն կրել և այժմ համապատասանաբար կազմում են 79.44 հա և 669.19 հա։

Էներգետիկայի, հատուկ նշանակության, անտառային և ջրային կատեգորիաների հողերը 2010 թվականի նկատմամբ փոփոխություններ չեն կրել և կազմում են համապատասխանաբար 883.5 հա, 1078.9 հա, 875.7 հա և 179.9 հա։

Քաղաքացիների սեփականության հողերը 2010 թվականի համեմատ ավելացել են 146.8 հեկտարով, որից՝ 119.5 հա տնամերձ հողեր՝ ի հաշիվ քաղաքացիների կողմից փաստացի օգտագործվող հողերի անհատույց օրինականացման, նաև սեփականության իրավունքի հիմքերի վերականգնման, 27.3հա՝ ինքնակամ զբաղեցրած հողամասերի օրինականացման, այդ թվում՝ 20.75 հա բնակելի և 6.6 հա հասարակական կառուցապատման, և կազմում են ընդամենը 5291.11 հա։

Իրավաբանական անձանց սեփականության հողերը 2010թ. տվյալների համեմատ պակասել են 4.2 հեկտարով, անցել քաղաքացիների սեփականության հողերի շարքը և այժմ կազմում են ընդամենը 2608.77 հա։

Համայնքային սեփականության հողերը 2010 թ. տվյալների համեմատ պակասել են 142.6 հեկտարով, անցել քաղաքացիների սեփականության շարքը և այժմ կազմում են ընդամենը 11055.82 հա։

Պետական սեփականության հողերը 2010թ. տվյալների համեմատ փոփոխություն չեն կրել և այժմ կազմում են ընդամենը 3359.5 հա։

Ոռոգվող վերալահողերը 35.5 հեկտարով պակասել և անցել են ոռոգվող տնամերձ հողերի շարքը։ Այսնինքն, 2010 թ. տվյալների համեմատ ոռոգվող հողերի ընդհանուր տարածությունը փոփոխություն չի կրել և այժմ կազմում է ընդամենը 3626.73 հա։

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» հ.656 որոշման 9-րդ կետը, համաձայն որի համայնքի ղեկավարը կազմում է հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու հետ, նախապատրաստվել է «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ